ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 19-ին, կիրակի օրը, Մայր Աթոռի Միաբանությունը և եկեղեցու հավատացյալները հոգևոր ուրախության և մխիթարության գեղեցիկ պահեր ապրեցին: Այդ օրը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա Եպս. Արաբաջյանի, հընթացս Ս. Պատարագի, տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանի վեցերորդ ավարտական լսարանի 11 սաների սարկավագական ձեռնադրության արարողությունը:

ՄԻ ՊԱՀ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ

Օրվա պատարագիչն էր Հոգևոր Ճեմարանի տեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաջարյանը:

Նորընծա սարկավագները, որոնք իրենց ուրարները և կիսասարկավագական կոչումները ստացել էին նախորդող երկու օրերի ընթացքում, Մայր Տաճարի լուսարարապետ Գերաշնորհ Տ. Հուսիկ Արք. Սանթուրյանի և խարտավիլակ Հոգեշնորհ Տ. Կարապետ Աբղ. Հարությունյանի փոխասացությունների ներքո ձնկաչոք բարձրացան Ս. Խորան: Հնչեցին ձեռնադրող Սրբազան Հոր խոսքերը. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք» (Մաշտոց, Միսարան):

Ապա Սրբազան Հայրը, օրհնությամբ, հոգևոր սպասավորության կոչվածներին տվեց «զսուրբ ուրարս»՝ «իշխանութիւն ընթեռնուլ զսուրբ Աւետարանս յեկեղեցիս Աստուծոյ», և «Հրաման խնկարկել և բուրել հոտիւ անուշութեան ի սպասաւորութեան սուրբ խորհրդոյն»: Հավարտ ձեռնադրության Անանիա Եպս. Արաբաջյանը շնորհավորական և խրատական խոսքեր հղեց նորընծաներին՝

ՆՈՐ ՁԵՌՆԱԴՐՎԱԾ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

հորդորելով հոգևոր ծառայության ընթացքում մշտապես ուղեկից ունենալ հույսը, հավատքը և սերը, հավատարիմ մնալ ազգային ավանդներին և մեր Եկեղեցու դավանական ըմբռնումներին:

Ս. Պատարագի ավարտից հետո նորաձեռնադրյալները, առաջնորդությամբ Հոգեշնորհ Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաջարյանի, այցելեցին Վեհարան, ուր Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով, իր հայրական պատգամը տվեց նրանց և հաձձնեց հուշանվերներ: Նորին Սրբությունը խնդրեց Բարձրյալից պաշտպանել նորընծա սարկավագներին «յերևելի և յաներևոյթ թշնամեաց»:

Նոր ձեռնադրված սարկավագները ուխտեցին լծվել ազգին ու Եկեղեցուն ծառայելու նվիրական առաքելությանը, որը սրբագործվել է մեր սուրբ նախնյաց մաքրակրոն կյանքով: Ծնորհավորենք նորընծաներին և մաղթենք, որ իրենց կարգի մեջ մնան անսասան:

Մայիսի 19-ին սարկավագ ձեռնադրվեցին.

Գարիկ սրկ. Ահարոնյանը ծնվել է 1974 թ. հոկտեմբերի 19-ին Էջմիածնի շրջանի Առատաշեն գյուղում: Սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1990 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը:

Սամվել սրկ. Խաչատրյանը ծնվել է 1973 թ. Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղում: 1979 թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոց և ավարտել այն 1990 թվականին: Նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

Հոգևոր ճեմարան, ասյա՝ 1996 թ. մայիսի 19-ին սարկավագական աստիճան ստանալով, ավարտել ճեմարանի դասընթացքը:

Հայկ սրկ. Գամաղելյանը ծնվել է 1974 թ. Էջմիածին քաղաքում: 1980 թ. ընդունվել է Էջմիածնի հմր. 9 միջնակարգ դպրոց, որը ավարտել է 1990 թ.: 1990 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը:

Նշան սրկ. Հովհաննիսյանը ծնվել է Արարատի մարզի Ավշար գյուղում 1973 թ. հունիսի 4-ին: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում 1979-1990 թթ.: 1990 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: Ավարտել է 1996 թ.: Նույն թվականի մայիսի 19-ին ձեռնադրվել է սարկավագ:

Հրաչ սրկ. Հովհաննիսյանը ծնվել է 1973 թ. հունվարի 17-ին Անիի շրջանի Բարձրաշեն գյուղում: 1979 թ. ընդունվել է Էջմիածնի հմր. 5 միջնակարգ դպրոց և ավարտել 1990 թվականին: Նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը:

Գեղամ սրկ. Մարտիրոսյանը ծնվել է 1975 թ. հունիսի 26-ին Էջմիածին քաղաքում: Սովորել է հմր. 12 միջնակարգ դպրոցում: Այն ավարտել է 1990 թվականին և նույն տարին էլ ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը:

Տիգրան սրկ. Սաֆոսյանը ծնվել է 1974 թ. մարտի 19-ին Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի /Բոգդանովկա/ շրջանի Սաթխա գյուղում: 1979 թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոց: 1989 թ. տեղափոխվել է ՀՀ Նաիրիի շրջանի Բուժական գյուղ: 1990 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա դասաշրջանը:

Խորեն սրկ. Ստեփանյանը ծնվել է 1973 թ. նոյեմբերի 22-ին Էջմիածին քաղաքում: 1979 թ. ընդունվել է տեղի հմր. 5 դպրոց, որն էլ ավարտել է 1990 թվականին: Նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս

Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը:

Գևորգ սրկ. Կյուրեղյանը ծնվել է 1973 թ. հոկտեմբերի 3-ին Վրաստանի Հանրապետության Նինոծմինդայի /Բոգդանովկա/ շրջանի Փոքր Արագյալ գյուղում: 1979 թ. ընդունվել է Բոգդանովկայի միջնակարգ դպրոց և այն ավարտել 1990 թվականին: Նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը:

Վահե սրկ. Տերտերյանը ծնվել է 1971 թ. Հազարջրիպ /Իրան/ գյուղում: 1975 թ. տեղափոխվել է ՀՀ Արարատի մարզի Լուսառատ գյուղ, ուր 1977 թ. ընդունվել է տեղի միջնակարգ դպրոց, որն էլ ավարտել է 1988 թ.: 1990 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը:

Գևորգ սրկ. Կրտիկաշյանը ծնվել է 1973 թ. Երևան քաղաքում: 1979 թ. ընդունվել է տեղի հմր. 26 դպրոց, որն ավարտել է 1990 թ.: Նույն թվականին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1996 թ. մայիսի 19-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական շրջանը:

ՍԱՄՎԵԼ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ